


**1.2.6. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկան (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը) 2000թ. հունվար – օգոստոսին

	2000թ հունվար-օգոստոսի փաստացի ծավալը, մլն. դրամ	2000թ.հունվար-օգոստոսը տոկոսներով 1999թ հունվար-օգոստոսի նկատմամբ	Տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ	
			2000թ. հունվար-օգոստոս	1999թ. հունվար-օգոստոս
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը այդ թվում՝	336365.3	106.4	100	100
մանրածախ ապրանքաշրջանառություն	227017.7	106.8	67.5	67.1
բնակչությանը մատուցված ծառայություններ	109347.6	104.1	32.5	32.9

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները (տոկոսներով՝ ընդհանուրի նկատմամբ)



Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2000թ. հունվար-օգոստոսին գրանցվել է սպառողական շուկայի ծավալի աճ (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով 6.4 տոկոս) և դրանում ավելացել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշիռը 0.4 տոկոսային կետով ու համամասնորեն նվազել է բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը: 2000թ օգոստոսին սպառողական շուկայի ծավալի աճի տեմպը հուլիսի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 104.7 տոկոս:

Մանրածախ առևտուր


2000թ. հունվար-օգոստոսին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 227.0 մլրդ. դրամ, որը 1999թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 6.8 տոկոսով (իսկ 2000թ օգոստոսին հուլիս ամսվա համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության աճի տեմպը, համադրելի գներով, կազմել է 111.2%):

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը 2000թ. հունվար-օգոստոսին

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ
Ընդամենը	227017.7	100
այդ թվում՝		
խանութներ	96926.7	42.7
հանրային սննդի օբյեկտներ	2058.5	0.9
սպառողական ապրանքների շուկաներ (տոնավաճառներ)	59542.2	26.2
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	14430.0	6.4
կրպակներ (տաղավարներ)	54060.3	23.8

Մանրածախ ապրանքաշրջանառության կառուցվածքն ըստ ձևավորման աղբյուրների, 2000թ. հունվար-օգոստոսին

(տոկոսներով ընդհանուրի նկատմամբ)



2000թ. հունվար-օգոստոսին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ է կազմել խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում (տոնավաճառներում) և կրպակներում (տաղավարներում) իրականացվող առևտուրը՝ 92.7 տոկոս (210529.2 մլն. դրամ), իսկ 7.3 տոկոսը (16488.5 մլն. դրամ) բաժին է ընկել հանրային սննդի օբյեկտներում և գյուղատնտեսական արտադրանքի շուկաներում իրականացվող առևտրին: Հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Գործող սպառողական ապրանքների շուկաներից (տոնավաճառներից) ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա 2000թ. հունվար-օգոստոսին ապրանքաշրջանառության ծավալը, փաստացի գներով, կազմել է 59542.2 մլն. դրամ:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառներ) ապրանքաշրջանառության ծավալների վերաբերյալ տվյալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2000թ.հունվար-օգոստոսին


	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում տոկոսով՝	
		պարենային ապրանքներ	ընդհանուրի նկատմամբ ոչ պարենային ապրանքներ
Արարատ	372.1	18.1	81.9
Արմավիր	762.9	62.9	37.1
Գեղարքունիք	873.9	19.7	80.3
Լոռի	1123.6	35.5	64.5
Կոտայք	1216.3	43.3	56.7
Շիրակ	1214.5	3.5	96.5

1. ԻՐԱԿԱ և ՀԱՏՎԱԾ

	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	ընդհանուրի նկատմամբ	
		այդ թվում տոկոսով՝ պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
Սյունիք	36.5	-	100.0
Տավուշ	1152.4	64.8	35.2
ք. Երևան	52790	14.7	85.3
Ընդամենը հանրապետությունում	59542.2	17.1	82.9

Հարկ է նշել, որ հանրապետությունում գործող սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով, որի տեսակարար կշիռը սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում 2000թ. հունվար-օգոստոսին կազմել է 82.9 տոկոս, իսկ պարենային ապրանքներինը՝ 17.1 տոկոս:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների (տոնավաճառների) ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալն ըստ ք. Երևանի և մյուս մարզերի (ամփոփ)
(տոկոսով ընդհանուրի նկատմամբ)



Ինչպես երևում է գծապատկերից 2000թ. հունվար-օգոստոսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ամբողջ ծավալում գրանցվել է Երևան քաղաքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի նվազում 0.1 տոկոսային կետով:

2000թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները մանրածախ առևտրի կազմակերպություններում կազմել են 22807.7 մլն. դրամ, իսկ ապահովվածությունը՝ 53 օր:

Հանրապետության սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: Հունվար-օգոստոսին այդ շուկաներում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 6.4 տոկոսը կամ 14430.0¹ մլն. դրամը:

¹ Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպած շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն:

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2000թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում ըստ արտադրական և սպասարկման ոլորտի 3300 առևտրային կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև չհաշվառված դաշտի լրահաշվարկման, բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը փաստացի գներով կազմել է 109347.6 մլն. դրամ, որը 1999թ. հունվար-օգոստոսի նկատմամբ համադրելի գներով կազմել է 104.1%: Ծառայությունների ինդեքսը անցած տարվա հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 101.5%: Ծառայությունների սակագներն աճել են 1.5%-ով, այդ թվում՝ կրթության՝ 18.0%-ով, մշակույթի՝ 4.4%-ով, առողջարանների և հանգստյան տների՝ 3.5%-ով, բժշկական՝ 3.4%-ով, օդային տրանսպորտի՝ 1.5%-ով, իրավական և բանկային՝ 1.0%-ով կենցաղային՝ 0.3%-ով, մարդատար տրանսպորտի՝ 0.1%-ով: Ծառայությունների մնացած տեսակների գծով նկատվում է սակագների նվազում կամ նույն մակարդակի պահպանում:

2000թ. օգոստոսին նախորդ տարվա օգոստոսի նկատմամբ ծառայությունների ծավալը համադրելի գներով կազմել է 105.8%, իսկ 2000թ. օգոստոսին հաշվետու տարվա հուլիսի նկատմամբ՝ 91.5%:

2000թ. հունվար-օգոստոսին ծառայությունների ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն հետևյալ ծառայությունները՝ բնակարանային-կոմունալ տնտեսության՝ 32.7%, (այդ թվում՝ բնակչությանն էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների բաժինը կազմում է 23.0%), մարդատար տրանսպորտի (ավտոմոբիլային և օդային) 32.5%, (այդ թվում՝ օդային տրանսպորտի բաժինը կազմում է 27.6%), կապի՝ 13.6%, կրթության համակարգի՝ 5.5%, մշակույթի՝ 4.3% (այդ թվում՝ վիճակախաղերի ծառայությունների բաժինը կազմում է 3.7%), բժշկական բնույթի՝ 2.3%, իրավական և բանկային՝ 1.8%, կենցաղային՝ 1.5%, մնացած ծառայությունները՝ 5.8% :

Այլ ծառայությունների տեսակարար կշիռը կազմել է 5.5%: 2000թ. հունվար-օգոստոսին 36 խաղատներից հավաքագրված հաշվետվությունների տվյալներով, ծառայությունների ծավալը կազմել է 538.4 մլն. դրամ կամ ծառայությունների ընդհանուր ծավալի 0.5%: